ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEBE-0A25-4588-B960 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3728/02/26 ք. Երևան
10 Ապրիլի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի՝ «Պրո Շին» ՍՊ ընկերության և Ապարանի համայնքապետարանի միջև 31.10.2025թ. կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀԷԱՃԱՊՁԲ-104/25-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 06.04.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի՝ «Պրո Շին» ՍՊ ընկերության և Ապարանի համայնքապետարանի միջև 31.10.2025թ. կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀԷԱՃԱՊՁԲ-104/25-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 06.04.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 07.04.2026 թվականին:

I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքից պահանջել ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի՝ «Պրո Շին» ՍՊ ընկերության և Ապարանի համայնքապետարանի միջև 31.10.2025թ. կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀԷԱՃԱՊՁԲ-104/25-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքից պահանջել ՀՀ-ԱՄ-ԱՀԷԱՃԱՊՁԲ-104/25-1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,

4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի մայիսի 25-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող գործողության՝ «Պրո Շին» ՍՊ ընկերության և Ապարանի համայնքապետարանի միջև 31.10.2025թ. կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀԷԱՃԱՊՁԲ-104/25-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման, հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև այդ գործողության կատարման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող գործողության իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է

ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

ԿՈՒԵՐՍԵՎԱՆ Է
ՀԱՏՈՒՄԸ
ԴՈՒՆԱՄԱՅՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am